Հաստատված է՝
Հյուսիսային համալսարանի գիտխորհրդի
2024թ հունվար 29 (N 56/4 արձ.) նիստում
Գիտխորհրդի նախագահ,
Հյուսիսային համալսարնի ռեկտոր՝

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ՈՐԱԿՅԱԼ ԲԱՐՁՐԱԳՈՒՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՍԱՆՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ

Երևան 2024

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Սույն կարգը սահմանում է Հյուսիսային համալսարանում ուսանողների կողմից դասավանդման արդյունավետության գնահատման կազմակերպման և իրականացման ընթացակարգը՝ նպատակ ունենալով ապահովել կրթության որակի շարունակական բարելավում:

Հյուսիսային համալսարանում պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման արդյունավետության գնահատման գործընթացը իրականացվում է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի[1]՝ կրթության որակի ապահովմանն ու ուսանողի կրթական իրավունքների իրագործման վերաբերյալ դրույթների հիման վրա, ինչպես նաև սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան: Կարգը նպատակ ունի երաշխավորելու ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածով ամրագրված՝ որակյալ բարձրագույն կրթություն ստանալու ուսանողի իրավունքի իրականացումը:[2]

2. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- Նպատակ ունենալով բարձրացնել դասավանդման արդյունավետությունը և ուսանողակենտրոն կրթության մակարդակը
- Հետազոտության արդյունքները հիմք են հանդիսանում տվյալահեն որոշումների իրականացման :
- Գնահատման գործընթացը իրականացվում է անանուն կերպով՝ ապահովելով ուսանողների տվյալների գաղտնիությունը:
- Գնահատման տվյալները վերածվում են բարելավման միջոցառումների, որոնք ուղղված են դասավանդման մեթոդների և կրթական միջավայրի բարելավմանը:

3. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

3.1 Հարցումներն իրականացվում են տարեկան մեկ անգամ՝ ուսումնական տարվա ավարտին:

3.2 Եթե այդ փուլը համընկնում է ուսումնական կամ արտադրական պրակտիկայի հետ, ապա հարցումն անցկացվում է պրակտիկայի ավարտից հետո մեկ շաբաթվա ընթացքում:

[1] https://www.arlis.am/hy/acts/25820

[2] https://www.arlis.am/hy/acts/143723

3.3 Գնահատման իրականացումից առաջ հարցաթերթի արդիականությունն ապահովելու նպատակով այն վերանայվում է, ըստ անհրաժեշտության քննարկվում է բազմամասնագիտական թիմի կողմից ։

3.4 Գնահատումը կատարվում է ֆակուլտետային սկզբունքով, այսինքն գնահատման թերթիկը կազմվում է յուրաքանչյուր ուստարում, յուրաքանչյուր ֆակուլտետի համար ընդգրկելով տվյալ ֆակուլտետի համապատասխան դասախոսների անվանացանկը։

4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Փուլ 1. Քանակական տվյալների հավաքագրում

Հարցման առաջին փուլն իրականացվում է օնլայն՝ Google forms հարթակի միջոցով, լսարանային պայմաններում, ձևաթղթերի հղումները տրամադրելով ուսանողներին, ՈԱՎ աշխատակիցների մասնակցությամբ, գործընթացի և հարցաթերթիկի վերաբերյալ մանրամասն տեղեկատվության մատուցմամբ։

Փուլ 2. Որակական տվյալների հավաքագրում

Քանակական հետազոտության արդյունքում վեր հանված խնդիրների վերաբերյալ ավելի խորը և ամբողջական պատկերացում կազմելու, նպատակով ՈԱՎ-ն իրականացնում է Ֆոկուս խմբային քննարկումներ՝ հարցումների արդյունքների վերլուծման և դրանցից բխող խնդիրների լուծման ուղիների մշակման առաջնահերթությամբ

- Ֆոկուս խմբերը կազմվում են ուսանողներից՝ բոլոր կրթական ձևերից։
- Կազմակերպվում են ՈԱՎ-ի կողմից՝ դեկանատների աջակցությամբ։
- ՈԱՎ կողմից նախապես կազմվում է հանդիպման օրակարգ։
- Արդյունքները արձանագրվում և վերլուծվում են սահմանված կարգով։

Փուլ 3. Վերլուծություն և բարելավման առաջարկների ներկայացում

Վերլուծության արդյունքները ներկայացվում են ուսումնամեթոդական հանձնաժողովում՝ արդյունքների հիման վրա ըստ անհրաժեշտության մշակվում են առաջարկներ ։ Առաջարկությունները տրամադրվում են ՄՈՒՀ-ի ղեկավարությանը՝ հետագա քննարկման և որոշումների կայացման նպատակով։ Կառավարման մարմինները, անհրաժեշտության դեպքում, փոխանցում են դրանք համապատասխան ստորաբաժանումներին՝ բարելավման գործընթացների պլանավորման և իրականացման համար։

5. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

5.1 Արդյունքները վերլուծվում են ՈԱՎ-ի կողմից և ներկայացվում համապատասխան ստորաբաժանումներին։

5.2 Օգտագործվում են՝

- Դասավանդման մեթոդների վերանայման,
- Վերապատրաստման ծրագրերի մշակման,
- Խրախուսման մեխանիզմների ձևավորման,
- Կրթական միջավայրի բարելավման նպատակով։

5.3 Արդյունքները մշակվում են անանուն՝ երաշխավորելով գնահատմանը մասնակցած անձանց տվյալների գաղտնիությունը ։

5.4 Վերլուծության ամփոփ հաշվետվությունները ներկայացվում են համապատասխան շահակիցներին։

5.5 Տվյալները պահվում են ՈԱՎ-ում մեկ տարի, ապա արխիվացվում առնվազն 5 տարի ժամկետով։

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դասավանդման արդյունավետության գնահատման սույն կարգը հիմք է հանդիսանում ուսանողակենտրոն, շարունակաբար բարելավվող կրթական գործընթացի ձևավորման համար՝ ապահովելով տվյալահեն որոշումների կայացում և պրոֆեսորադասախոսական կազմի զարգացում։